

## ԱԿՆԱՐԿ ՍԵՎԱՆԻ ԼՃԱՎԱԶԱՆԻ ԼԱՆԴՀԱՖՏԱՅԻՆ ԲՈՒՄԱԾԱԾԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ս. Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ԳՊՀ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոն*

Սևանի լճավազանի լանդշաֆտային կառուցվածքը պատմականորեն լավ ուսումնասիրված է: Բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ լճավազանը նախկինում ունեցել է այժմյանից խիստ տարբերվող բուսական ծածկոց: Մասնավորապես հնագիտական, հնէաշխարհագրական ուսումնասիրություններով և ժամանակակից փոշեհատիկային վերլուծության տվյալներով ապացուցվել է, որ Ք. ա. 4-1 հազար տարի առաջ լճավազանի գերակշիռ մասը ծածկված է եղել անտառներով: Դրանք հիմնականում տարածվել են լիճը թափվող գետերի հովիտների վրա: Սկսելով գետերի ակունքների շրջակայքից և հովիտներով անընդհատ իջնելով դեպի գետաբերան Գեղամա և Վարդենիսի լեռնալանջերի անտառներն ընդարձակվել են: Համաձայն տարբեր տեղեկությունների՝ անտառածածկը ավելի զարգացած է եղել Սևանի կղզում, Փամբակի լեռնաշղթայի վերջնամասում և Արեգունի լեռնաշղթայի լճահայաց լանջերում, որտեղ ամենայն հավանականությամբ ջերմային ավելի բարենպաստ պայմաններ են եղել: Դրա ապացույցը այդ տարածքներում թփուտային բուսականության առկայությունն է, որտեղ մինչ այժմ կարելի է հանդիպել շուրջ 13 տեսակների՝ ասպիրակ, չմենի, մասրենի, սզնի և այլն: Թփուտները երկրորդային ծաղում ունեն և ոչնչացված անտառների տեղում են:

Լայնատերև անտառների տարածվածությունը ապացուցվում է նաև Սևանի լճավազանում հնէաբանական ուսումնասիրություններով հայտնաբերված արջի, գայլի, եղջերուի, աղվեսի բրածո կմախքներով, որոնք վկայում են անտառային գեոհամակարգերի գոյության մասին[1]: Մասրիկ գետի անտառապատվածության փաստը հաստատվում է նաև Ա. Թախտաջյանի ուսումնասիրություններով [5]: Սևանի լճավազանի բուսական ծածկոցի փոփոխությունների մասին ուսումնասիրություններ են կատարել նաև Օ. Մ. Ջեղեկմեյերը, Լ. Ս. Բերգը, Գ. Բ. Գրիգորյանը, Յ. Վ. Սայադյանը, Հ. Յ. Սայադյանը և այլք [2,3,4]: Պարզվել է, որ անցյալի ընդարձակ անտառածածկն անընդհատ կրճատվել է, իսկ դրա հաշվին ավելացել է տափաստանային լանդշաֆտային բուսականությունը: Այսպես, անցյալի նկատմամբ 1927-1929 թթ. լճավազանի կաղնուտները և խառը անտառները կրճատվել են 4-9 անգամ, իսկ 21-րդ դարասկզբին մի քանի տասնյակ անգամ: Այդ ժամանակահատվածում գիիու-

ները տարածքային էական փոփոխություններ չեն կրել, բացառությամբ նրա, որ նախկին խիտ և զանգվածային այդ անտառը նոսրացել և ցրիվ տարածման է վերածվել: Հետաքրքիր է, որ որքան կրճատվել են անտառները, գրեթե նույնքան ավելացել են տափաստանները:

Սևանի լճավազանի բուսածածկի փոփոխությունները շատ տարբեր պատճառներ են ունեցել: Դա սկզբնական շրջանում կապված է եղել լճավազանի մշտական բնակեցմամբ և անտառափայտը որպես վառելիք ու շինանյութ օգտագործելու հետ: Ավելի ուշ՝ միջին դարերում, հսկայական տարածքներ հատվելուց հետո դրվել են գյուղատնտեսական հողօգտագործման տակ: Եվ քանի որ հետանտառային հողերը ավելի բարձր բերրիություն են ունեցել անտառահատումները անընդհատ ընդարձակվել են: Անտառի վերին եզրերը անասնազվիսաքանակի ավելացման պատճառով նույնպես սկսվել է ավելի ինտենսիվ շահագործվել: Արածեցումների հաճախության ավելացման և մշտական անասնատնատակի պայմաններում անտառները աստիճանաբար վերափոխվել են արոտավայրերի, տափաստանների և մարգագետինների: Դրան նպաստել է նաև կլիմայի աստիճանական քերմացումը և չորությունը: Տարածաշրջանի չորության վրա ազդել է նաև անցյալ դարի կեսերից էներգետիկ նպատակների համար Սևանի ջրապաշարների օգտագործումը: Շուրջ 20 մետրով լճի մակարդակի իջեցման հետևանքները փորձել են մեղմացնել ջրատակից ազատված տարածքները անտառապատելու միջոցով: Բայց ինչպես ցույց է տվել հետագան, ցանկալի արդյունքներ չեն գրանցվել և որոշում է ընդունվել բարձրացնել լճի մակարդակը մինչև 1903 մ սահմանագիծը:

Սևանի լճավազանի վերընթաց լանդշաֆտային բոլոր գոտիները կլիմայի փոփոխության և մարդու անմիջական ներգործությամբ այժմ էլ վերափոխվում են: Բուսական ծածկոցում տեսակային լուրջ փոփոխություններ են կատարվում, ավելանում են չորասեր, չուտվող և թունավոր բուսատեսակները: Չոր և խոնավ տափաստանները, մասամբ նաև ալպյան մարգագետինները, անկանոն արածեցումների պատճառով խիստ տրորվում և ոտնատակ է արվում: Դրանք զրկվում են ինքնակարգավորման գրեթե բոլոր հնարավորություններից: Տարիներ շարունակ ոչ համակարգված արածեցման հետևանքով բնական արոտավայրերի զգալի մասը վերափոխվել են ցածր արտադրողականություն ունեցող կերահանդակների, որոնցից ընդամենը մինչև 3 -4 ց/հա բերք է ստացվում:

Այժմ բարվոք չէ նաև լճավազանի արհեստական և բնական անտառտարածքների վիճակը: Լճավազանի պետական անտառֆոնդը 1993 թվականի տվյալներով կազմում էր 20 հազ. հեկտար, որից արհեստական անտառները՝ 15 հազ. հա: Անտառազրկումը 1992-1996 թթ. կազմել է 7200 հա, որից հատ-

ված տարածքը՝ 2300 հա: Լճավազանի բնական անտառներն ընդամենը 3400 հա է, որից 370 հա խոշորառեչ կաղնուտներ, իսկ գերակշիռ մասը՝ 3000 հա գիհու նոսր անտառներ են:

Լճավազանում անտառազրկման հիմնական պատճառները անընդհատ ծառահատումները, անկանոն ներանտառային անասնապահությունը, ծառատեսակների (կաղնի) սերմերի հավաքը և խարշամի օգտագործումն են: Վերջինիս բացակայության պայմաններում խարշամով չծածկված և չոր պայմաններում հայտնված սերմերը շատ վատ են ծլում որով և խաթարվում է անտառի բնական վերարտադրությունը:

Ամփոփելով ուսումնասիրված նյութը՝ կարելի է եզրակացնել, որ լճավազանի բնական և արհեստական բուսածածկը պահպանելու և հետագա ոչ ցանկալի փոփոխությունները կանխելու համար անհրաժեշտ է միջազգային ծրագրերի և ներհամայնքային ֆինանսական միջոցներով լճավազանի գետահովտային լանջերում 2100 – 2200 մ բարձրություններից ցած իրականացնել անտառհիմնման և անտառապահպանության համալիր աշխատանքներ: Լճավազանում կարգավորել տափաստանների, մարգագետինների և ալպյան գոտու շահագործման ընթացքը: Համայնքներին ամրացված այդ կերահանդակները մակերեսային բարելավման, արածեցումների կանոնավորման, ինքնացանությունը կարգավորելու և այլ համարժեք միջոցառումների իրականացման կարիք ունեն:

*Բանալի բառեր – Սևանա լիճ, բուսական ծածկոց, անտառ*

#### Գրականություն

1. **Սայադյան Գ. Յ.**, Հայաստանի Հանրապետության անտառային զեռհամակարգերի տարածաժամանակային փոփոխությունները և կառավարման խնդիրները: Եր., ԵՊՀ հրատ., 2010, 261 էջ:
2. **Вассейн озера Севан/Гокча/**. Выпуск 2. Т. 2, Л. Гидрометеоздат, 1930. 264 с.
3. **Григорян Г. Б.**, Ландшафты бассейна озера Севан. Ереван. Изд-во АН Арм ССР, 1984. 145 с.
4. **Зедельмейер О. М.**, Отчет о геоботаническом исследовании юго-восточного и южного берегов озера Севан летом 1928 года. Л. Гидрометеоздат. 1930 Вып.2,Т.2, с 189-252.
5. **Тахтаджян А. Л.**, Ботанико-географический очерк Армении. Тр. БИН АН СССР, 1941, т.2,3. 156 с.

## **ОЧЕРК ОБ ИЗМЕНЕНИЯХ ЛАНДШАФТНЫХ РАСТИТЕЛЬНЫХ ПОКРОВОВ В БАССЕЙНЕ ОЗЕРА СЕВАН**

**С. М. ГРИГОРЯН**

*Кандидат сельскохозяйственных наук,  
преподаватель ГГУ*

В течение длительного времени состав растительного покрова и типы ландшафтов бассейна озера Севан подвергались значительным изменениям. Под природно-антропогенным воздействием лесные ландшафты постепенно сокращались. Разные лесотипы по сравнению с прошлыми данными в 1927 – 1928 гг. уменьшились на 4 – 9, а в начале 21-го века в несколько десятков раз. Уничтоженные леса почти полностью были заменены степными растениями. Нежелательные изменения и ныне происходят на этих ландшафтах, где увеличивается количество ксерофитных, несъедобных и ядовитых растений.

Для улучшения экологической ситуации и предотвращения дальнейших изменений предлагается путем финансирования международными программами, а также местными фондами, начать восстановление лесов в речных долинах до высоты 2100 – 2200 м. над уровнем моря, регулировать эксплуатацию степей, лугов и альпийской зоны, в кормовых угодьях произвести поверхностные улучшения, способствовать самосеву и на других равноценных восстановительных мероприятиях травостоя.

### **TITLE ABOUT THE CHANGE OF LANDSCAPE GRASS STAND IN BASIN SEVAN LAKE**

**S. M. GRIGORYAN**

*Doctor of Agricultural Sciences, Associate Professor,  
Lecturer of GSU*

In long period composition of vegetation types and landscapes Lake Sevan was subjected to a great change. Under natural - anthropogenic influence forest landscapes gradually decreased. Forest types different compared to previous data in 1927 - 1928 years has decreased in 4 - 9, and in the early 21 - century several ten times. Destroyed forests were almost completely replaced by steppe plants. Now go and unwanted change in these landscapes, where increased the number of xerophytes, and uneatable poisoned plants.

For making better environmental situation and prevent further changes proposed financing of international programs and local funds to start reforestation of the river valley to a height of 2100 - 2200 m above sea level. Adjust the operation of the steppes, meadows and alpine zone. In forage lands produce superficial improvement, contribute to self-seeding and other equivalent activities recovering grass.